

Երեւոնեայ այսպէս

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՊ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՅԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 դեկտեմբերի

Հունաստանի եւ Կիպրոսի դասվիրակություններին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Զուլիքիս եւ Կիպրոսի Հանրապետության նախագահի՝ հումանիտար եւ արտերկրյա հարցերով հանձնակատար Ֆոտիոս Ֆոտիոսի գլխավորած պատվիրակությունները՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար Հրանուշ Հակաբյանի:

նման հուշագրի ստորագրմամբ: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը ողջունեց հյուրերի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նշելով, որ նման գործակցության համար ամուր հիմք են ծառայում դարձրելով ձեռնարկված սերտ հարաբերությունները: Նորին Սրբությունը կարեւորեց պատմական հանգամանքների բերումով տարբեր երկրներում ապաստան գտած հայ եւ հույն ժողովուրդների գաղթականների նկատմամբ դրսևորվող հոգատարությունը, ինչը կնպաստի Սփյուռքի առջեւ ծառայող արդի մարտահրավերների հաղթահարմանը եւ ազգային ինքնության պահպանմանը:

18 դեկտեմբերի

Վոլոգդայի նահանգապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Վոլոգդայի նահանգապետ Օլեգ Կուվշինսկիովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի եւ Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Հրայր Կարապետյանի:




Անդրադառնալով մարզի հայ համայնքի կյանքին՝ նահանգապետը տեղեկացրեց, որ մարզում գործում է հայկական մշակութային կենտրոն, բացվել է կիրակնօրյա դպրոց, խոսեց հայկական եկեղեցու կառուցման ծրագրի մասին:

տանըը հայտնեց պրն Օլեգ Կուվշինսկիովին՝ Վոլոգդայի հայ համայնքին ցուցաբերվող ազնիվ գորակցության համար, որի շնորհիվ առաջիկա տարիներին հայրողիները կունենան նաեւ իրենց արդթատունը: Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Աստված ջերմ ու հաստատուն պահի երկու ժողովուրդների եղբայրական հարաբերությունները, եւ մարզերի միջեւ ձեռնարկված կապերն արդյունավորվեն գեղեցիկ սոր ձեռքբերումներով:

ՊԱՐՏԱԿԱՆ ԵՄ ԲԱՐՁՐՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 12-ին Հովհաննես Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանի քահանայական ձեռնադրության 30, եպիսկոպոսական՝ 20 եւ առաջնորդության՝ 21- ամյակներին նվիրված հոբելյանական միջոցառումը: Սրբազան հոր հոբելյանական նախորդ արարողություններից որեւէ մեկը երբեւէ չէր ընդգրկել նման



մասշտաբներ, եւ մինչ օրս չէին ներկայացվել թեմակալ առաջնորդի՝ անցած 21 տարիների առաջնորդության բուն գործունեության թեկուզ փոքրիկ ընթացքը եւ արարումները... Միջոցառմանը ներկա էին քաղաքային, մարզային իշխանության ներկայացուցիչներ, մարզպետներ, քաղաքապետեր, համայնքապետեր, ԱԺ պատգամավորներ, այլ պաշտոնյաներ, մշակութային ու հասարակական գործիչներ, ուսանողներ եւ բարեպաշտ ժողովուրդը: Ներկա էին նաեւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից միաբան եպիսկոպոսներ: Միջոցառման մեկնարկն ազդարարվեց ՀՀ պետական օրհներգով, ապա բոլոր ներկաները միասին իրենց արդթեցին առաքելական առ Աստված՝ տերունական «Հայր մեր»-ը հնչեցնելով: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից դիվանապետ Արշակ եպս հաջատրյանն ընթերցեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ շնորհավորանքի գիրը, որով Վեհափառ Հայրապետը, արժեւորելով սրբազանի անցած ուղին, Տիրոջ հանապազ գորակցությունն էր հայցում նրա պատասխանատու առաքելության մեջ: Արշակ սրբազանն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հոբելյանական այս տարեդարձերի առթիվ սրբազան հորը նվիրեց ոսկեգոծ եւ աղամանակալու ձեռնաք խաչ: «Մեր երկրի մեծագույն հարստությունը հայ մարդն է», - ասում էր դուք. - «Ճիշտ այնպիսին, ինչպիսին Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ սրբազան Չուլջյանն է», - ասում ենք մենք», - իր խոսքում սրբազանին ներկայացրեց եւ շնորհավորական ուղերձ հղեց միջոցառման նախաձեռնող եւ հովանավոր, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: *Շարունակությունը՝ էջ 2*

ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԱԿՍՆՈՒՄ

Դեկտեմբերի 17-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, միաձուլեց Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ, որի ընթացքում կատարվեց նաեւ քահանայական ձեռնադրություն: Քահանայության կոչվեց վեց սարկավագ: Նախորդ օրը՝ Երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր տաճարում կատարվել էր ընծայման կարգը:

Պատարագին էր Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանը՝ իր քահանայական ձեռնադրության 30-ամյակի եւ եպիսկոպոսական օծման 20-ամյակի առիթով: Սեպուհ արքայանք, քահանայության կոչելով նորընծաներին եւ նրանց օծելով սրբալույս Մյուռոնով, նորած եկեղեցականներին շնորհեց նոր՝ հոգեւոր անուններ:

Արման արկ. Ահարոնյանը (Արագածոտնի թեմ) վերակոչվեց Մխիթար քահանա, Գեւորգ արկ. Զեյնյանը (ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդություն)՝ Նժդեհ քահանա, Սահակ արկ. Սիմոնյանը (ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդություն)՝ Կիրակոս քահանա, Հովհաննես արկ. Մանուկյանը (Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոն)՝ Հրանտ քահանա, Մելքոն արկ. Բարսեղյանը (Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսչու-



Էջմիածնում՝ Իջման ս. Սեդակի առջեւ, այս սրբազան տաճարում, հիշատակության արժանի պատմական մի օր է, քանզի վեց երկվյալ հայորդի, ովքեր ավարտելով ձեռնարակական իրենց ուսումնառությունը, իրենք իրենց նվիրաբերեցին Հայաստանյայց Առաքելական սուրբ եւ անմահ Եկեղեցուն՝ ի ծառայություն եւ ի սպասավորություն Բարձրալիկ՝ մեր Տիրոջ, եւ մեր սիրելի ժողովրդին:

տապես՝ ողջ հայ ժողովուրդը: Անվագ է եղել օրհնությունը Ս. Էջմիածնի, որ անընդհատ տարածվել է համայն հայության վրա թե՛ Հայաստանում, թե՛ ի Սփյուռք աշխարհի: Եվ այդ կերպ կերտվել է պատմությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու: Եվ այս օրը մեկ ակնթարթ է այդ հսկա պատմության մեջ. տեղի ունեցավ մի սրբազան արարողություն, որտեղ այս վեց

ճշտախոս եւ արդարադատ, խորագետ եւ սկզբունքային, խաղաղասեր եւ համբերող, ներողամիտ եւ հանդուրժող, երկայնամիտ եւ խստապահանջ, քաջակորով, ողորմած ու եղբայրասեր:

«Կատարեք այնպես, ինչպես խրատել են մեր հայրերն անցյալում, այժմ եւ ապագայում: Զանի դեռ Աստուծո օրհնությունը մշտապես մեր ազգի վրա անմաքորդ հեղվում է, մենք պարտավոր ենք հոտ եւ հովիվ հարաբերությունները, եկեղեցի եւ ժողովուրդ հարաբերությունները մշտապես անաղարտ պահել, սիրո մեջ պահել, կարգապահ լինել եւ հնազանդ լինել թե՛ հովվապետին, թե՛ առաջնորդներին եւ թե՛ հովվին: Այս կերպ, մեր ուժը՝ միասնության մեջ, մենք կարող ենք դիմակայել այն բոլոր փորձություններին, որ պարբերապար հառնում են մեր հասարակության առջեւ:

...Ուստի եւ դրանով մեր հովիվները դառնում են սիրելի, համբուրելի, վստահելի, որոնց կիստեւի ժողովուրդը, անգամ, կարող ենք ասել, կուրորեն կիստեւի, երբ կա փոխադարձ վստահություն միմյանց նկատմամբ: Եվ փառք Տիրոջը, փառք Բարձրալիկ, որ դարերի ընթացքում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր հովվապետերի գլխավորությամբ, իր առաջնորդներով, իր հովիվներով մշտապես ժո-



թուն)՝ Զեյնյան քահանա, Երիկ արկ. Պատվականյանը (ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդություն)՝ Սեբեդեոս քահանա:

Ձեռնադրության ավարտին նորած քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկա հոգեւոր դասին եւ ուխտավոր ժողովրդին:

Այնուհետեւ սրբազան հայրն իր պատգամը բերեց նորընծաներին. «Այսօր Մայր Աթոռ Ս.

Իր երախտագիտությունը հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ ընծեռված այս պատեհ առիթի եւ հնարավորության համար՝ Սեպուհի սրբազանն անդրադարձավ օրվա կարեւորությանը. «Այս սրբազան տաճարում օծվել են հայրապետներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ եւ սարկավագներ, օրհնվել են թագավորներ, իշխաններ, բարերարներ եւ մշ-



քահանա հայրերն ուխտեցին սուրբ Իջման Սեդակի առջեւ իրենց առաքելությունը բերել մեր ժողովրդին: Երջանիկ է եւ ուրախ այն ժողովուրդը, որն ունի այսպիսի հզոր Եկեղեցի եւ ունի այսպիսի հզոր հավատ ու ժողովուրդը:

Պատարագի սրբազանը խոսեց նաեւ հովիվ կերպարի մասին՝ պատգամելով երիտասարդ քահանաներին լինել օրինապահ,

ղովրդի հետ միասին այդ հավատն ու վստահությունը կերտել են անմաքորդ սիրով եւ անխաթար, որի արդյունքում մենք կանք այսօր եւ որի արդյունքում է, որ մենք օրավուր դարձյալ գործառնում, ամրանում ենք, որի արդյունքում մենք այսօր ունենք առաջընթացը»,- նշեց Գուգարաց թեմի առաջնորդը:

Շարունակությունը՝ էջ 4

Սկիզբը՝ էջ 1

Նա սրբազանին պարգևատրեց Լոռու մարզպետի ոսկե մեդալով:

Իրենց ողջույնի խոսքն ուղղեցին նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը եւ ՎԴՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը: Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը սրբազանին նվիրեց «Աստվածածնի յոթ վերքը» սրբապատկերի կրկնօրինակը, որն իր հերթին սրբազան հայրը նվիրեց Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցուն:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեցին Սեպուհի սրբազանի կյանքի եւ գործունեության փոքրիկ դրվագներ՝ ֆիլմերի տեսքով, ելույթ ունեցան Վանաձորի կամերային նվագախումբը, «Հորովել» երգի-պարի անսամբլը, մենակատարներ Արմինե Վիրաբյանը, Արմեն Ներսիսյանը, Ալեքսեյ Ավետիսյանը, Ստեփան Դավաթյանը:

Սրբազան հորը եւ ներկաներին իրենց կատարումով մեծ անակնկալ եւ հիացմունք պարգևեցին Գուգարաց թեմի քահանա հայրերը՝ խմբերգով կատարելով «Հայրիկ, հայրիկ» երգը՝ Կոմիտասի մշակմամբ:

Հոբելյանական այս տոնակատարությունների առթիվ Սեպուհի արք. Չուլջյանը, բարձրանալով բեմահարթակ, իր ողջույնի, շնորհակալության, գնահատանքի եւ օրհնության խոսքն ասաց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին, որը միջոցառման նախաձեռնողն էր եւ հովանավորը:

Սրբազան հայրն իր որդիական սերն ու ե-

ՊԱՐՏԱԿԱՆ ԵՄ ԲԱՐՁՐՅԱԼԻՆ



րախտագիտությունը հայտնեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օրհնության եւ բարեմաղթանքների համար: Ապա դիմեց դաիլիճում ներկա գտնվողներին.

«Հայտնի ճշմարտություն է, որ երբ մեզանից մեկը բարձրանում է՝ բարձրանում ենք բոլորս, եւ մեզանից մեկի անկումով՝ ընկնում ենք բոլորս: Կամ ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Եվ եթե մարմնի որեւէ անդամ ցավ է գգում, նրա հետ ցավ են գգում

բոլոր անդամները եւ եթե մի անդամ փառավորվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները» (Ա. Կորնթ. ԺԱ 26):

Այսօր իմ հասցեին հնչած բոլոր բարի, ազնիվ գնահատանքի խոսքերի միակ հասցեատերը ես չեմ: Ես, գիտեք, որ Ձեր առջեւ երբեք չեմ կեղծել: Ուստի եւ այս գնահատանքի հասցեատերը դուք եք՝ այս դաիլիճում նստածները՝ ներկա ու նախկին բոլոր մարզպետները, քաղաքապետներն ու համայնքա-

պետերը, իմ արքեպիսկոպոս, եպիսկոպոս, վարդապետ ու քահանա եղբայրները, խաչքավորները, ներկա ու նախկին պատգամավորները եւ իմ Մեծ ուսուցիչները՝ գյուղաբնակ ու քաղաքաբնակ ժողովուրդը:

Իմ առաջնորդության անցած 21 տարիները լի էին թե՛ փորձություններով եւ թե՛ փորձառություններով: Աշխատեցի մայրուն արժեքներ ստեղծել, անցողիկ ու առօրյա ճղճիմ խնդիրներից վերանալ: Հաջողությունների համար պարտական եմ Բարձրալիկին, որ օրհնեց իմ ծնողներին եւ ինձ: Օրհնեց ու դարձրեց իր հոտի սպասավորը: Եվ, ինչպես միշտ, այժմ էլ աղոթում եմ՝ փառք Զեյ, Աստված, փառք Զեյ, ամեն ինչի համար փառք Զեյ:

Սակայն անհաջողությունների համար մեղավորներ չեմ փնտրում: Ամենամեծ մեղավորը դարձյալ ես եմ, որ տկարացել եմ, թերացել եմ եւ կամ գայթակղվել ու պարտականություններս լավ չեմ կատարել: Ուստի նախ Բարձրալիկ, հետո ձեր ներողամտությունն եմ հայցում՝ բացթողումներով համար: Եվ կրկին Ավետարանի խոսքով խոստովանում եմ. «Անպիտան ծառաներ ենք, ինչ պարտավոր էինք անել, արեցինք» (Ղուկաս. ԺԷ 10):

Դաիլիճը բուռն ծափահարություններով ողջունեց սրբազան հորը: Հոբելյանական միջոցառման ավարտվեց միասնական երգչախմբի կողմից «Էջ Միածին ի Հօրե» շարականի հոգեպարար կատարմամբ:

Դիվան Գուգարաց թեմի

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ



Դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփանոս Նախավկայի հիշատակության օրը, Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ, կատարվեց նաեւ սարկավագական ձեռնադրություն:

Պատարագիչն էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Լավասարյանը:

Նախորդ օրը՝ Երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր տաճարում տեղի էր ունեցել դպրության, ուրարակության եւ կիսասարկավագության տվչության արարողությունը: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Բ լսարանի 13 սան ստացել էր դպրության, Դ լսարանի 16 սան՝ ուրարակության, իսկ 5-րդ լսարանի 12 եւ քահանայից պատրաստության լսարանն ավարտած 4 սան՝ կիսասարկավագության աստիճան:

Ս. Ստեփանոսի տոնի առիթով, Վարդան սրբազանի ձեռամբ, սարկավագական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան ճեմարանի եւ քահանայից պատրաստության լսարանի 16 սան:

Ձեռնադրության ավարտին սրբազան հայրն անդրադարձավ տոնի իմաստին ու Ս. Ստեփանոսի Նախատակության պատմությանը՝ նշելով, որ Ստեփանոսը համաքրիս-

տոնեական առաջին Նախատակը դարձավ իր հավատքի ապրումով եւ վկայությամբ: «Սուրբ Ստեփանոս Նախավկայի հիշատակության օրը մեզ համար նախնայաց կողմից հրավեր է՝ նորոգելու մեր ծառայության ուխտը, որ է՝ ծառայություն ընտանիքին, ազգին ու ժողովրդին եւ մանավանդ՝ Աստծուն եւ Եկեղեցուն», - ասաց սրբազանը:

Նորընծա սարկավագներին ուղղված իր խոսքում նա նշեց. «Տիրոջ լուծը խորհրդանշող ուրարը, որ այսօր ձեր ուսերին դրվեց, նաեւ ձեր միջավայրի, ժողովրդի կողմից երբեմն չհասկացվելու, փշոտ, դժվարին ճանապարհով ընթանալու նշան է: Սակայն ինչպես մեր ամենքի հավատքի աղբյուր Հիսուսն է ասում, եթե հավատաք իրեն, իր հետ միության կատարյալ գիտակցությամբ ապրեք, ձեր կյանքում կիսուսի Հիսուսը, եւ ձեր շուրթերից Տիրոջ խոսքը կհորդա ու կտարածվի հավատացյալների սրտերում ու հոգիներում, դուք ձեր ծառայությամբ մի մասնիկը կդառնաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելության, եւ այդպիսով այդ լուծը կքաղցրանա ձեր կյանքում»:

Սարկավագական ձեռնադրություն կատարելու կապակցությամբ Վարդան սրբազանն իր որդիական երախտագիտությունը հայտնեց Գարեգին Բ Հայրապետին՝ նշելով, որ այսօր Վեհափառի առաջնորդությամբ Մայր Ա-

թոռ Ս. Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունները նոր ավյունով, նոր սխրանքներով, մեծ գործերի պատրաստ երիտասարդներով լրացնում են միաբանության շարքերը:

Ս. Պատարագի ավարտին եկեղեցակալաց դասը եւ ներկա ժողովուրդը հնարավորություն ունեցան համբուրելու Ս. Ստեփանոսի մասունքով Աջը եւ ստանալու նրանից ճանազող օրհնությունը:

Հավարտ սուրբ Պատարագի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի բոլոր սարկավագներին ու նորընծաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանի, Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Լավասարյանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի:

Տոնի կապակցությամբ շնորհավորելով ամենքին՝ Նորին Սրբությունը հորդորեց սարկավագներին մշտապես իրենց աչքի առջեւ ունենալ Ստեփանոս Նախավկայի ոգեշնչող օրինակը, սիրել Աստծուն, անմաքորդ ու անսակարկ ծառայել Զրիստոսի սուրբ Եկեղեցուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր իր ուրախությունն արտահայտեց նորընծա սարկավագների ձեռնադրության առիթով՝ վստահություն հայտնելով, որ նրանք անձնորդ աշխատանքով ու նվիրյալ ջանքերով իրենց նպաստը կբերեն մեր ժողովրդի եւ Եկեղեցու առջեւ ծառայած մարտահրավերների ու խնդիրների հաղթահարման գործին՝ հույս ներշնչելով դեպի Հայոց Եկեղեցու վաղվա օրը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց նաեւ միաբան սարկավագներին՝ պատգամելով նույն ոգով ու նախանձախնդրությամբ շարունակել իրենց սպասավորությունը Մայր Աթոռին եւ անբասիր ծառայությամբ հայրորդիների համար սիրելի դարձնել Հայոց Եկեղեցին:

Հայոց Հովվապետը մաղթեց, որ երկնավոր Տերն իր առատ օրհնությունը հեղի սարկավագների վրա, որպեսզի տերունապարգեւ շնորհներով արդյունավետ դարձնեն իրենց հոգեւոր սպասավորությունը:

Վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց սարկավագաց դասին՝ տոնի առթիվ ամենքին ընծայելով հոգեւոր գրականություն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ունի 141 միաբան սարկավագ, եւս 39-ը ուսանում են Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:



ՇՔԱՆՀԱՆՆԵՐԻ ԽԱՆՃՆԱՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ա ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԵ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանների անձնաման հանդիսավոր արարողություն:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» եւ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ շնորհվեցին 33 արվեստի վաստակավոր գործիչ Արգաս Ոսկանյանին, 33 արվեստի վաստակավոր գործիչ Ստեփան Ռոստոմյանին, 33 արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի ազգային կինոակադեմիայի Նախագահ Վիգեն Զալորանյանին եւ Սամվել Արսենյանին՝ ի գնահատություն երկրին եւ ժողովրդին մատուցած իրենց օգտաշատ ծառայությունների:

Արարողությունն սկսվեց Տերունական աղոթքով, ապա երեկոյալի մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռի դիվանատան ներկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քին. Ավետիսյանը:

Այնուհետեւ մեծարյալների ծառայություններին անդրադարձան նրանց գործընկերներն ու մտերիմները: Պրն Սուրեն Չոհրաբյանը ներկայացրեց Սամվել Արսենյանի եկեղեցանվեր իրագործումները: Երաժշտական ընկերության Նախագահ, Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանն անդրադարձավ Արգաս Ոսկանյանի գործունեությանը: Օսո Սարգսյանի անվան Համազգային թատրոնի փոխտնօրեն Սահականուշ Սահակյանը խոսեց Վիգեն Զալորանյանի ստեղծագործական ուղու մասին: Ստեփան Ռոստոմյանի վաստակը ներկայացրեց պրոֆեսոր Աննա Արեւշատյանը:

Ապա «Էջ Միածինն ի Յօրե» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակներն ու շքանշանները:

Մայր Աթոռի դիվանատան Արշակ Եպս Խաչատրյանը ներկայացրեց տիար Սամվել Արսենյանին ուղղված կոնդակը, որում նշված է. «Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ արք. Մկրտչյանից տեղեկացանք տիրախնամ թեմին մատուցած Ձեր օգտաշատ ծառայությունների մասին: Գոհունա-

կություն է Հայրապետիս համար, որ Դուք ինքնաբերաբար սիրով հովանավորեցիք Գնդեվազ գյուղի Սուրբ Եղիշե մատուռի եւ մատաղատան կառուցման եւ տարածքի բարեգարդման աշխատանքները: Ձեր եկեղեցանվեր հանձնառությունը բարի վկայություն է Ձեր աստվածասիրության, ազգասիրության ու եկեղեցասիրության:

Մենք փառք ենք մատուցում Ամենախնամ Բարձրյալին, որ հավատավոր Մեր գավակ-

ները շարունակում են աստվածահաճո իրագործումներով առավել զորացնել ու պայծառացնել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայությանը բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու կերտողական շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ մեր Եկեղեցու նկատմամբ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակվեն արդյունավորվել աստվածահաճո նորանոր գործերով՝ ի շահ սիրեցյալ մեր ժողովրդի եւ ի զորացումն համազգային մեր կյանքի»:

Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանն ընթերցեց Արգաս Ոսկանյանի ուղղված հայրապետական կոնդակը, որում մասնավորաբար ասված է. «Գոհունակություն է Հայրապետիս համար անդրադառնալ հայ երաժշտարվեստի ասպարեզում շնորհաշատ հայրորդու բեղմնավոր գործունեությանը: Կրթությունն ստանալով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Դուք երիտասարդ հասակից սկսեցիք ելույթները հայաստանյան ու արտերկրի բեմերում՝ Ձեր աստվածպարգեւ տաղանդի արգասիքները մատուցելով արվեստասեր հասարակությանը:



Սկիզբը՝ էջ 3

Իբրև երգահան՝ ստեղծագործական արդյունավոր գործունեությանը հավաքեցիք ու մշակեցիք հարյուրավոր հայկական երգեր ու մեղեդիներ՝ ղեկավարելով ժողովրդական երգերի հավաքման բազմաթիվ գիտարշավներ Հայաստանի տարբեր շրջաններ ու բնակավայրեր: Կաստակաշատ Ձեր գործունեության տարիներին ստեղծեցիք ու ղեկավարեցիք նաև ժողովրդական համույթներ ու երգչախմբեր՝ ծառայելով ազգային երաժշտարվեստի պահպանման ու տարածման նվիրական առաքելությանը:

Գնահատելի է Ձեր ավանդը երաժիշտների նոր սերնդի պատրաստության շնորհակալ գործում: Մանկավարժական նախանձախնդիր գործունեությամբ Դուք Ձեր սաներին փոխանցել եք Ձեր գիտելիքներն ու վարպետությունը՝ նրանց հաղորդ դարձնելով ազգային երաժշտության մաքուր ակունքներին: Մենք գոհունակությամբ ենք նաև անդրադառնում, որ Արարատյան հայրապետական թեմի Մեր փոխանորդության տարիներին Դուք, որպես Հայրոցյաց տների գեղարվեստական խորհրդի անդամ, ազնիվ ջանքեր եք ներդրել մանուկների ու պատանիների երաժշտական ծիրանների արթնացման, մեր մշակույթի ու արվեստի հանդեպ սիրո գործընթացի համար:

Հայ արվեստի եւ մշակույթի անդաստանում Ձեր վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնգրեսով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս. Սափասարգյանը ներկայացրեց տիար Ստեփան Առաքելականի շնորհած հայրապետական կոնգրեսը, որում ի մասնավոր արձանագրված է. «Բարձրագույն կրթություն ստանալով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Դուք լծվեցիք ստեղծագործ աշխատանքի՝ աստվածաբարձի Ձեր կարողություններն ի սպաս բերելով արվեստի ճանապարհով Հայրենիքին ու հարազատ ժողովրդին ծառայելու առաքելությանը: Այսօր Ձեր կյանքի հոբելյանական հանգրվանը Դուք դիմավորում եք երաժշտական արվեստի ասպարեզում արդյունավոր վաստակով: Երբ երկրի մշակութային կյանքի զարգացմանը Դուք գովաբան ծառայություն մատուցեցիք նաև «Քսանմեկի հեռանկարներ» միջազգային փառատոնի հիմնադրումով, որի շնորհիվ արդեն ավելի քան մեկ ու կես տասնամյակ շարունակական ընթացքով Հայաստանում ելույթներ են ունենում աշխարհահռչակ երգիչներ ու երաժիշտներ՝ մեր ժողովրդին ներկայացնելով իրենց բարձրակարգ արվեստը:

Շքանշանների հանձնման արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Մենք գոհունակությամբ Մեր բարձր գնահատանքն ենք հղում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ մշտապես դրսևորած Ձեր անկեղծ սիրո ու նվիրումի համար, որ բարի արդյունավորմամբ դրսևորել եք նաև Ձեր գործունեության մեջ: Դուք երկար տարիներ անհոգաբարձի աշխատանքով իրականացրեցիք «Շա

րական» շարքի հրատարակությունը, կազմակերպեցիք հոգեւոր երաժշտության փառատոներ եւ հայ եկեղեցական երաժշտության գոհարները ներկայացրեցիք տարբեր երկրներում՝ ավանդ բերելով աշխարհում հայ հոգեւոր երգարվեստի հարուստ ժառանգության ճանաչմանը:

Ուրախ ենք նաև, որ Դուք Ձեր ջանքերն ու կարողությունները ծառայեցրել եք երաժիշտների նոր սերնդի պատրաստության կարեւոր գործին՝ երկար տարիներ դասավանդելով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Երգարվեստի անդաստանում Ձեր ավանդի բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի խնդրանքին, Հայրապետական այսու կոնգրեսով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնգրեսը, որում մասնավորապես ասված է. «Գոհունակություն է Հայրապետիս համար Մեր գնահատանքը բերել Ձեզ՝ մշակութային ու հավատավոր ժողովրդին մատուցած Ձեր երկարամյա արդյունավոր ծառայությունների համար: Կինտարվեստի հանդեպ սերը Ձեզ տակավին դարձրեցիք տարիներից տարավ «Հայֆիլմ»-ի կինոդրաստիկ ստուդիա, որտեղ անվանի ուսուցիչների առաջնորդությամբ առաջին քայլերը կատարեցիք կինոյի լայնահուն աշխարհում: Ձեր ուսումը ամբողջացրեցիք Երեւանի գեղարվեստաթատերական եւ Մոսկվայի կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտներում՝ գիտելյաց հարուստ պաշարով եւ ստեղծագործելու բուն ցանկությամբ սկսելով Ձեր գործունեությունը՝ որպես դերասան, ռեժիսոր ու բեմադրիչ:

Այսօր տասնամյակների զովարժան վաստակն ու ձեռքբերումներն են գարդարում Ձեր կյանքի ընթացքը: Ձեր նկարահանած կինոնկարներն ու բեմադրած թատերական ներկայացումները կրում են Ձեր խոհական մտքի, հավատավոր ոգու ու հայրենասիրական զգացումների կնիքը՝ առանձնանալով հեղինակային յուրօրինակ ձեռագրով ու ճաշակով: «Ապրիլ», «Ձայն բարբառո», «Տեր ողորմեա», «Լռության սիմֆոնիա», «Ձայն լռության» եւ Ձեր բազմաթիվ այլ ստեղծագործությունները հարստացրել են հայ ժամանակակից կինոյի ժառանգությունը՝ նախանձախնդիր ու շնորհաշատ մտավորականի ճանաչում բերելով հավատավոր հայրորդու եւ արժանացնելով Ձեզ հայրենական ու միջազգային պարգևների ու մրցանակների:

Ձեր գործունեության ընթացքին

կարելի էր եւս երիտասարդ սերնդի պատշաճ կրթությունը՝ մանկավարժական առաքելություն իրականացնելով Երեւանի թատրոնի ու կինոյի պետական ինստիտուտում եւ Ձեր փորձն ու գիտելիքները սիրով փոխանցելով Ձեր սաներին:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած օգտաշատ ծառայությունները մեր երկրին ու ժողովրդին՝ Հայրապետական այսու կոնգրեսով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Կոնգրեսի ընթացքումից հետո Գարեգին Բ Վեհափառը Հայ Եկեղեցու շքանշաններով գարդարեց մեծարյալների կուրծքը:

Պարգևաբաշխության առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաև շնորհընկալները՝ երախտագիտություն հայտնելով Հայոց Հայրապետին՝ Հայ Եկեղեցու ուշադրության եւ կարեւոր գնահատանքի համար:

Երեկույթին երաժշտական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Եօրնեկեան» հանրակրթական դպրոցի երգչախումբը եւ «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայրորդյաց տան սաները:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին բարձր է գնահատում իր արժանավոր գավակներին, ովքեր իրենց կյանքն ամբողջապես նվիրել են իրենց առաքելությանը, աշխատանքին ու արվեստին՝ ապրելով ու արարելով հոգեւոր արժեքներ եւ իրենց վաստակը ծառայեցնելով հայրենիքին, ազգին եւ Եկեղեցուն:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկաներին:

ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 2

Անդրադառնալով ՀՀ անկախության տարիներին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու վերագործունեությանը եւ եկեղեցաշինությանը՝ Սեպուհ սրբազանը վերստին ամենքի անուկից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանից թեմերին շարունակ առաքելով են հովիվներ, ովքեր ի պետս ժովվորդի եւ Եկեղեցու՝ իրենց առաքելությունն են իրականացնում տարբեր համայնքներում: Սրբազանը շնորհակալական խոսքով դիմեց նաև ճեմարանի տեսչությանը, Մայր Աթոռի լուսարարապետությանը եւ միաբանությանը, որոնց ուշադրության եւ խնամքի ներքո կերտվում է հայ եկեղեցականը, արմատավորվում այն գիտակցությունը, որ եկեղեցու ծառայությունը վայելի սպասավորություն չէ, այլ՝ չարչարանքի, զրկանքի եւ տեսակ-տեսակ դժվարությունների, որի մեջ հզորանում են բոլոր նրանք, ովքեր հավատք ու տեսիլք ունեն, ովքեր անմնացորդ ու անսակարկ նվիրաբերում են իրենց անձը Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին:

Այնուհետեւ՝ «Ողջույնի» ժամանակ, ներկա հոգեւոր դասը՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բարձրացավ խորան եւ համբուրելով երիտասարդ քահանաների մյուռնաբույր ձեռքերը՝ նրանցից ստացավ առաջին «Ողջույնը»:

Նորընծա քահանաները քառասուրյա պատրաստության իրենց շրջանը կանցկացնեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որից հետո Հայոց Հովվապետի օրհնությամբ ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:

Դեկտեմբերի 18-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորընծա քահանաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովհան Եպս. Հակոբյանի:

Հովհան սրբազանը Նորին Սրբությանը ներկայացրեց նորաօծ հոգեւորականներին եւ հայցեց Հայոց Հովվապետի հայրական օրհնությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետն իր շնորհավորանքներն ուղղեց Մխիթար քն. Ահարոնյանին, Նժդեհ քն. Բեշիշյանին, Կիրակոս քն. Սիմոնյանին, Հրանտ քն. Մանուկյանին, Զերովբե քն. Բարսեղյանին եւ Սերովբե քն. Պատվակայանին՝ ուրախություն հայտնելով ձեռնադրության կապակցությամբ:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ հոգեւորականների կարիքը մեծ է, եւ նորաօծները գալիս են լրացնելու Հայոց ցեղասպանության եւ խորհրդային տարիների հալածանքների հետեւանքով առաջացած հոգեւոր հովիվների պակասը: Վեհափառ Հայրապետը հավելեց, որ նրանք պետք է շարունակեն նահատակված հոգեւորականների առաքելությունը՝ եկեղեցական անդաստանում իրենց խոնարհ ու նվիրյալ սպասավորությամբ կյանքի կոչելով նրանց իղձերն ու տեսիլքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորաօծների ուշադրությունը հրավիրեց նաև եկեղեցականի կերպարին՝ մասնավորապես նշելով, որ հոգեւոր ծառայությունը է՛լ պատիվ է, է՛լ պատասխանատվություն, ուստի երիտասարդ հոգեւոր սպասավորները պետք է իրենց կոչման բարձր գիտակցությամբ ու սիրով լծվեն իրենց առաքելությանը՝ շենացնելով եւ պայծառացնելով Հայոց Եկեղեցին:

Վեհափառ Հայրապետը հոգեւորականներին պատգամեց բարի օրինակ լինել հավատացելոց համար, աստվածասեր, բարեպաշտ եւ հայրենասեր ծառայությամբ ու կենցաղավարությամբ ուրախություն եւ մխիթարություն պարգտեն հավատավոր ժողովրդին՝ էլ ավելի բարձրացնելով նաև Հայ Եկեղեցու բարի համբավն ու հեղինակությունը:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց նորաօծ քահանաներին եւ նրանց ընծայեց «Մաշտոց» ծիսարաններ:

Լույս են տեսել

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել 2018 թվականի պաշտոնական եւ սեզանի օրացույցները:



Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Բաբկեն վրդ. Սալբիանն ազատվել է Կիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդի պարտականություններից եւ ծառայության կոչվել Վանորեցի տեսչությունում՝ վանորեցի տեսչի իշխանության ներքո:

Լրատվական կուրթերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՆԵԿԱՏԱԿԱՆ ՀՆԱՆԱԿՐԳԻ

Սկիզբը՝ թիվ 16-19, 21-23

2.

Ն. Ադոնցը, որ իր «Յայաստանի պատմության» մեջ՝ գրված ֆրանսերեն, մանրակրկիտ անդրադարձել է Շամիրամի իրական եւ առասպելական կերպարին, նշում է. «Նախքան որպես աստվածուհի դիցաբանության մեջ մտնելը, նա իշխել էր Ասորեստանի հզոր թագավորների գահի վրա: Նրա Շամիրամաթ անունը գտնվել է սեպագիր արձանագրություններում. այսպես էր կոչվում Շամշի-Ադաթ թագավորի կինը (826-811): Այնուհանդերձ, անժխտելի է, որ հին դարերում ունեցած իր անսահման ժողովրդականությանը նա պարտական է ոչ թե թագուհի լինելուն, այլ, ապահովաբար, աստվածուհի լինելուն, քանի որ նա ձուլվել էր Մեծ Մոր հետ» (Ն. Ադոնց. Յայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 379: *St'u* նաև «Mitteilungen der Deutschen Orient. Gesellschaft», համար 40 (1909), էջ 24, համար 42 (1919), էջ 34):

Անպատուղ ենթադրությունների փոխարեն լավ կլիներ, որ Ռասսելը անառակ Շամիրամի իրական պատկերը որոներ հույն հեղինակների երկերում՝ ոչ միայն մեդասի թեմայի մեջ խորանալու, այլև անառակ դատողություններից խուսափելու համար: Դիոդոր Սիկիլիացին իր Պատմական գրադարանում բերում է Աթենայոսի կարծիքը, թե Սեմիրամիսը եղել է սիրունադեմ հետերա (Ս. Մ. Կրկյաշարյան՝ Դիոդոր Սիկիլիացի. Պատմական գրադարան, Եր., 1985, Գիրք 2, էջ 30), եւ գուցե հենց դրա համար է Մովսես Խորենացին Ասորեստանի թագուհուն բնորոշում յուրահատուկ բառով՝ «կաթոտն Շամիրամ» (Խոր., Ա, Ե, էջ 20): Զետեփոնն իր «Անաբասիս»-ում հուևարեն «հե-

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



տերաներ» է անվանում սեռական շեղում ունեցող պատանիներին եւ կանանց, որոնց հելլեն գիևկորները թաքցնում էին նահանջող գործի մեջ (Զետեփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 84, 91-92, 120): Իսկ այն արյունապղծությունը, որ Ռասսելը համառորեն որոնում է Խորենացու «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» առասպելում, կարող է գտնել Յոհաննես Մալալայի հունարեն «ժամանակագրության» մեջ՝ իսկ եւ իսկ իր փափագած վկայությամբ, որին,

ցավոք, տեղյակ չէ նաեւ Ադոնցը: Հակառակ Դիոդոր Սիկիլիացու եւ Մովսես Խորենացու, որոնք Սեմիրամիսին Ասորեստանի առասպելական թագավոր Նինոսի կինն են համարում, Մալալան հաղորդում է. «Սեմիրամիսը, որին ասորեստանցիք անվանում էին Ռիեա, Կրոնոսից (Դեթանոս հելլենների գերագույն աստվածը, որը համապատասխանում է հռոմեական Սատուրնին) ծնել էր երկու որդի եւ մեկ դուստր: Նրա որդի Նինոսը (ըստ Դիոդորի եւ Խորենացու՝ Նինվաս), որը թագավորեց 32 տարի, կին էր առել իր մայր Սեմիրամիսին, ինչպես պարսիկների մեջ ընդունված օրենք էր՝ կին առնել իրենց մայրերին եւ քույրերին... Նինոսի սերնդից էր եւ Չրադաշտը՝ պարսից հռչակավոր աստղագետ» (Joannis Malalae Chronographia - Migne Patr. Graec. Tom. 92, Col. 84, p. 19-20): Թեեւ Խորենացին, անշուշտ, իր բարեկրթության պատճառով չի նշում այս փաստը, բայց դիտել է տալիս, որ Նինվասը (որ եւ Չամեսես էր կոչվում) այնքան ատեց իր հեշտասեր Շամիրամ մորը՝ անառակության համար, որ սպանեց նրան (Խոր., Ա. ԺԹ, էջ 57):

Այստեղ եւ ուզում եմ պատկառանքով հիշատակել մ. թ. I դարի հրեա պատմագիր Յովսեփոս Փլավիոսին, որը նույնպես եր վերաբերվում մեր ժամանակի հրեա պրոֆեսոր Ջեյմս Ռասսելի փայլալից ինքնատիկ: Յովսեփոսը վկայում է, թե պարթե թագավոր Փրատատը, ունենալով կին եւ որդիներ, Յովսեփոս Կեսարից նվեր է ստանում Թեսմուսա անունով մի ստրկուհի՝ իբ-

րեւ հարձ, բայց գայթակղվելով նրա գեղեցկությանը՝ նրանից ունենում է մի որդի՝ Փրատատակես անունով, եւ ստրկուհուն հռչակում է իր կինը՝ շնորհելով այլ պատիվներ: Փրատատակեսը, հասակ առնելով, դավադրություն է նյութում իր թագավոր հոր դեմ՝ մոր մասնակցությամբ, որի հետ, ըստ գրույցների, ինքը կենակցում էր:

Ի հեճուկս Յարվարդի համալսարանի պրոֆեսորի՝ այս դրվագը ես բերում եմ ցույց տալու համար 2000 տարի առաջ ապրած հրեա պատմագրի բարոյական վերաբերմունքը, որով նա նկարագրում է պարթեների գայթակցությունը անառակ մոր եւ նրա ծնած անառակ որդու նկատմամբ. «Նա ատելի դարձավ երկու տեսակետից. հայրասպանությունից ոչ պակաս՝ իր մոր նկատմամբ տածած սեռական սերը նույնպես առաջ բերեց հպատակների մեջ, այնպես որ նախքան նա կհզորանար, ապստամբություն ծագեց նրա դեմ, եւ նա գահընկեց արվեց ու այդպես մահացավ» (Flavii Josephi Antiquitatum judaicarum. Parisiis, 1845, XVIII, 40-43. Յովսեփոս Փլավիոս. Յրեական հնախոսություն, Եր., 1976, գիրք 18-րդ, 40-43, էջ 75-76): Իրականում պարթեները մեր թվարկության 4 թվին դավադրությամբ սպանել են իրեն թագավոր հռչակած հայրասպան եւ արյունալից Փրատատակեսին: Այս փաստն ինքնին ցույց է տալիս, որ Յարվարդի պրոֆեսորը զուր է զրպարտում պարթեներին, թե նրանք, կրակապաշտ լինելով, համատարած զբաղվում էին արյունապղծությամբ: Շարունակությունը՝ էջ 7

Չորավար Անդրանիկի կյանքի եւ գործունեության բոլոր փուլերը կարելի էր ուսանելի են երիտասարդ սերունդների դաստիարակության համար:

Անդրանիկը տարագրության մեջ էլ ամեն օր ու ամեն ժամ ապրում էր հայրենիքի հույսերով, հոգեբերով, կարողանալու ու տագնապներով: Դառն, միապաղաղ եւ հուսահատեցնող էր Չորավարի համար կյանքն արտասահմանում, եւ նրան միակ միջոցառություն պարգևողն իր գիևկորներն էին, որոնցից անբաժան եղավ մինչեւ կյանքի ավարտը:

Տարագրության մեջ նա որոշեց հաստատվել ԱՄՆ-ում եւ բնակության վայր ընտրեց Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքը, որի չոր ու արեւոտ եղանակը շատ նպաստավոր էր: 1922 թվականի կեսերից հետո Չորավարը վերջնականապես հաստատվեց Ֆրեզնոյում: Ֆրեզնո քաղաքի եւ ամբողջ Կալիֆոռնիայի հայությունը շերտություններով դիմավորեց եւ շրջապատեց նրան: Սփյուռքահայ մեծանուն գրող Վիլյամ Սարոյանը, որն այդ ժամանակ ընդամենը 14 տարեկան պատանի էր, հետագայում վերհիշում է այսպես. «Կը թվեր, թե Կալիֆոռնիո ողջ հայությունը քաղաքի կայարանը հաւաքված էր՝ անոր ժամանակն օրը» («Էջեր գրականութան եւ արուեստի», Պեյրուզ, 1965 թ., էջ 119): Չորավարի Կալիֆոռնիա ժամանումը տեղի հայության բոլոր շերտերի կողմից ընդունվեց եւ ընկալվեց որպես արժանավայել ու պատմափառ շատակ իրադարձություն: Սակայն առաջին իսկ օրերին Չորավարի առողջական վիճակը տկարանում է, եւ մոտ երկու ամիս բուժում է ընդունում անկողնում: Այդ ընթացքում Ֆրեզնոյում հայերից կազմավորվել էր մի կոմիտե՝ Օգանյանների վարձած բնակարանն ամեն ինչով կահավորելու եւ իբրեւ հարսանեկան նվեր նրանց հանձնելու համար: Նվարող, որի հետ Անդրանիկն ամուսնացել էր 1922 թվականին (հարսանյաց հանդեսը կայացել էր նույն թվականի մայիսի 15-ին՝ Փարիզի հայկական եկեղեցում), այս առիթով հետեւյալն է արձանագրում. «Երբ մենք գացինք մեր տունը, ասանկակալի եկանք. Տունը շատ գեղեցիկ կահավորված էր ամեն պիտույքներով, բոլոր նվիրողները հոն հավաքված էին, որոնք ծափերով դիմավորեցին մեզ: Կրկնք երեւակայել մեր ուրախությունը եւ հուզումը» («Երեկոյան երեւան», 26 փետրվարի, 1990 թ.): Ամերիկահայությունը ջանքեր ու միջոցներ չէր խնայում՝ Երգրի առասպելից ծն-

ՄԱՆԱ ՉԵՆ ՆՈԳՎՐ, ՎՅԼ ԳՈՐԾՍ, ՈՐ ԿԻՍԱՅ ՄՆԱՃ...

Չորավար Անդրանիկի մահվան 90-րդ տարեկիցի առթիվ

ված Չորավարի առօրյա-ամենօրյա կյանքը գեղեցիկ, հագեցած ու բովանդակալից դարձնելու համար: Սակայն, միեւնույն է, Չորավարն իր համար խորթ ու տարօրինակ այդ միջավայրում առանձնապես լավ չէր զգում: Հանգստավետ, փափուկ ու անդորր կյանքն ամենեւին նրա սրտով չէր: Սասնո լեռների հերոսը խեղճացել ու դառնացել էր ամերիկյան հանգստավետ, բարեկեցիկ ու առեւտրական միջավայրից: Դա նրա երագած կյանքը չէր բնավ:

Պետք է նշել, որ Ամերիկա մեկնելուց ընդամենը մի քանի ամիս առաջ՝ 1922 թ. գարնանը, Անդրանիկը նորից մտադրվել էր իջնել պատերազմի դաշտ՝ մասնակցությունը բերելու ընթացող թուրք-հունական պատերազմին: Ընդդեմ բարբարոս թուրքի, հունական մարտնչող զորաբանակին աջակցելու նպատակով, Չորավարը մտադիր էր սկսել հայոց կամավորական մի խումբի շարժում: Այդ նպատակով նա 1922 թ. մայիսի 8-ին գրեց եւ Սփյուռքի պարբերականներում հրատարակեց «Արթնացի» խորհրդանշական վերնագրով կոչ-դիմում: Նրանում ասված էր հետեւյալը. «Հայ ժողովուրդ, ի՞նչ կմտածես, այսօր քո արժանապատուութիւնը վերականգնելու առիթն է: Մինչեւ երբ քո դիպլոմատները մուրացկաւի դէր պիտի կատարեն: Եթէ կուզես ապրիլ, ահա վերջին առիթը: Օգնէ դու Արեւելքի քրիստոնէայ Մեծ եղբորը, որպեսզի ան ալ թեզ օգնէ. Լինել ու չլինելու մէջ ես: Եթէ անտարբեր մնաս, կորստեան անդունդն է առջեւ: Մի դաւաճանիր մէկ միլիոն նահատակներով» (ՀՀ ազգային արխիւ, ֆ. 370, ց. 2, գ. 69, թ. 1): Անդրանիկի այս կոչը, որը նաեւ որպէս թուրքի էր հրատարակվել, բուն արձագանքների արժանացավ: Շատերը զգուշացան հայության համար հնարավոր մի նոր ողբերգության պատուհասումից: Գնց այդպիսի զգուշավոր դիրք բռնեցին գաղութահայության եւ Հայ Առաքելական Եկեղեցու պատասխանատու գործիչները: 1922 թ. մայիսի 16-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքը Չորավարին գրած նամակում նշում է, որ միայն զգացումներով կարելի չէ այս ազգն առաջնորդել փրկու-

թյան, եւ որ «կամավորական նոր շարժում մը մեզի պիտի արժէ թանկագին կեանքերու կորուստ մը՝ առանց հաստատուն երաշխավորութիւն մը ընծայելու արդիւնքին ապահովութեան մասին»: Այս զգուշավոր կեցվածքը միանգամայն հասկանալի ու բնական էր, քանի որ արեւմտահայության ցեղասպանության օրերից անցել էր ընդամենը մի քանի տարի, եւ հայությունը նոր փորձությունների պատրաստ չէր: Պատրիարքը խնդրում է Չորավարին հետաձգել զորական նոր շարժումը՝ մինչեւ պատեհ առիթը կներկայանա: Չորավարը, իհարկե, ունկնդիր ու հնազանդ եղավ պատրիարքի եւ ազգային իշխանությունների հորդորներին, եւ կամավորական նոր շարժումը չկայացավ:

Դետագայում եւս, ընդհուպ մինչեւ մահը, Անդրանիկը միշտ ու մշտապես հարմար առիթ էր սպասում՝ իր գիևկորներով վերստին Արեւմտյան Հայաստան անցնելու եւ կիսատ թողած գործը շարունակելու համար: Սակայն, ավա՜ղ, ճակատագիրն այլ լեւ նման պատեհություն չընձեռեց: Աշխարհն այլեւ այլ էր: Ցեղասպանություն իրագործած երկիրը՝ Թուրքիան, իր բիրտ ուժի շնորհիվ աշխարհին պարտադրել էր ընդունել եղած իրողությունները: Չորավար Անդրանիկն առաջացած տարիքի, սրվող հիվանդությունների, օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ հանգամանքների առկայության պայմաններում այլեւ անկարող էր որեւէ բան փոխել հայոց ճակատագրի ընթացքի մեջ: Ավելին. նույն ինքը՝ նորին մեծություն ճակատագիրը, ուղղորդումներ էր մտցնելու Անդրանիկի կյանքի ընթացքի մեջ: Նրան այլեւ սակավ ժամանակ էր մնացել ապրելու համար:

Դետգիտե տկարացող առողջական վիճակը Չորավարին ստիպում էր մտորել կյանքի մնացած հատվածն առավել հանգիստ ու խաղաղ անցկացնելու մասին: Նրա հոգում բուն ցանկությունն էր առաջացել թողնել Ամերիկան եւ ընդմիշտ մեկնել Հայաստան: Այդ մասին անթաքույց կերպով հայտնել էր բարեկամներին ու զինակիցներին: Հայոց հողը մազնիսական հզոր



ուժով կանչում էր Չորավարին: Արդյո՞ք դա հնարավոր էր, չէ՞ որ այնտեղ հաստատված խորհրդային վարչակարգը ուներ իր յուրահատուկ սկզբունքներն ու տրամաբանությունը: Մոսկվայից ուղղորդված ճնշումներով խորհրդային Հայաստանի կառավարությունը չէր կարող հաշտ նայել եւ քաջալերող պահվածք ունենալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսների հանդեպ: Ահա թե ինչու Անդրանիկի վերադարձը հայրենիք չէր կարող իրականություն դառնալ՝ չնայած այն հանգամանքին, որ Չորավարը երբեք վատ չէր արտահայտվել խորհրդային իշխանությունների հասցեին:

Չորավարն օրինիբուն այրվում, տանջվում էր դառն ու սրտակեղեք հուշերով, Երգրի կորստի տագնապներով եւ նահատակ հայության ծանր վշտերով: Հոգին եւ մարմինն այլեւս դժվարությամբ էին պայքարում իրն ու նոր հիվանդությունների դեմ:

Շարունակությունը՝ էջ 6

Սկիզբը՝ թիվ 20, 22-23

3.

Հոռուսում «բառացիորեն ոչ մի ծառայող չունեցող» է. Չարենցը Ազգային թանգարանի ցուցասրահներից մեկում վաղ առավոտյան՝ դեռ «համաշխարհային ցեղերը» տուրիստները, չեկած, միայնակ, «ամենայն անտարբերությամբ» դիտում էր Վաղ Վերածննդի՝ Ռինաշիմենդոյի դարաշրջանի հրաշալիքները՝ Նախ՝ քանդակները, ապա՝ գեղանկարները, գմայլվում էր իտալական «ինչ-որ հռչակավոր վարպետի ինչ-որ հռչակավոր» կտավով, երբ նրան «պատահաբար» մոտենում է Վ. Նավասարդյանը:

Քրիստոսի՝ տառապած, թաղված ու հարություն առած հաջալի նկարի ընտրությունն այս դեպքում ամենեւին էլ պատահական չէր, այլ գրողի համար՝ համեմատության հիմք: «Ո՛չ վարպետի անունն էմ հիշում, ո՛չ՝ նկարի. հիշում էմ միայն, որ նկարը ներկայացնում էր տախտակե, համարյա մեռելային դեմք, որի, ինչպես ասում են, «ճակատին տանջանք կար, եւ, միեւնոյն ժամանակ, անդրաշխարհային կնիք»:

Իր վրա «աննկարագրելի ցնցող տպավորություն» թողած այդ անակնկալ հանդիպման առաջին իսկ պահի առթիվ Չարենցը կատարել է չափազանց խոսուն մի համեմատություն: «Բանն այն է, որ երբ ես, ինչ-որ չոր մատների հպումից գրգռված, շուռ տվի հայացքս, որ նայեմ ինձ այնպես անակնկալորեն մոտեցած բարեկամիս դեմքին, միտքիկական, այո՛, համարյա միտքիկական մի զգացմունք էր, որ առաջին վայրկյանին համակցեց երկուսն, ես, նույնիսկ, ետ-ետ գնացի, աչքերս, կարծեմ, չմկնեցի, չգիտեմ, չեմ հիշում, թե ինչպես պատահեց այդ ամենը, բայց մի բան հիշում եմ պարզ, ինչպես արեւի լույսը, եւ դա ինձ անակնկալորեն մոտեցած առաջին հայացքից անծանոթ բարեկամիս աչքերն էին, որ, երեւակային՝ ում եք, անչափ նման էին Ռինաշիմենդոյի հռչակավոր Քրիստոսի ժպտաթախիծ աչքերին» (էջ 28-

ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՐԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ԵՎԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

29, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Ուշադիր ընթերցողն ընդգծվածներից անմիջապես կըմբռնի, որ հանդիպողները ոչ թե պատահական անծանոթներ էին, այլ միայն առաջին հայացքից էին անծանոթ, ուրեմն՝ վաղուց չհանդիպած հին ծանոթներ կամ բարեկամներ, իսկ դա հաստատվում է պատմվածքի շարունակության մեջ՝ մանավանդ գրուցակիցների՝ միմյանց փոխադարձ հարցումներով ու հիշեցումներով: Կպարզվի նաեւ, որ «պատահաբար» հայտնված այդ «անծանոթ բարեկամը» ներկայացուցիչն է մի «տիեզերական կուսակցության», եւ որ այդ կուսակցությունը ներկայացնող բարեկամը, ո՛չ ավել, ո՛չ պակաս, համեմատվում է Ամենասուրբ Երրորդություն կազմողներից մեկի՝ Որդի Աստծո, այսինքն՝ հանուն մարդկության փրկության դառնության բաժակը ցմրոր ճաշակած, անտանելի տառապանքներ կրած եւ գերագույն զոհաբերություն հանձն առած Զիսուս Քրիստոսի հետ: «Առաջին վայրկյանին ինձ նույնիսկ թվաց, թե դա նույն ինքը՝ Վաղ Ռիմենդոյի Քրիստոսն է, որ բնության տարօրինակ մի խաղով նկարից սահած վար՝ նայում է աչքերիս - սատանան գիտե, թե ինչ դիտավորությամբ: Ինձ նույնիսկ թվաց, որ եթե հայացքս դարձնեմ ու նայեմ պատիկ, ոչինչ չպիտի տեսնեմ այնտեղ՝ նկարի ոսկեգոծ շրջանակից բացի» (ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Ուրեմն՝ կատարյալ է դաշնակցության ներկայացուցիչ Նավասարդյանի ու Քրիստոսի նմանությունը՝ նրանց միմյանցից տարբերելու անկարելիության աստիճան: Բայց այս դեպքում Վ. Նավասարդյանն այլևս մասնավոր անձ կամ գործիչ չէ, այլ՝ ներկայացուցիչն այն «տիեզերական կուսակցության», որը նույնպես կրել է տան-



ջանքներ ու փշե պսակ, խաչվել, թաղվել ու հարություն առել:

Այն է Չարենց հայի ու բանաստեղծի իրական վերաբերմունք-գնահատականը Վ. Նավասարդյանին ու նրա կուսակցությանը:

Կոմունիստ Չարենցի համոզմամբ՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո արդեն մեռած էին իր բարեկամն ու նրա կուսակցությունը, եւ ինքն էլ մասնակցել է հուղարկավորությանը, անգամ մի բուռ հող է գցել նրա դագաղին՝ «հոգու հանգստության համար»: Ահա ինչու է Չարենցը Նավասարդյանին անվանել Զանգուցյալ Պարոն կամ Պարոն Զանգուցյալ, ուրեմն արտասահմանյան այդ պատմվածքի տարրական թվացող վերնագիրն ամենեւին էլ սովորական բառախաղ չէ:

Նույնիսկ ամենասիրելի մեռելներին պարտադիր թաղելու գաղափարը նոր չէր Չարենցի համար. այդ գաղափարն էր ընկած 1921-24 թթ. գրված «Երկիր Նաիրի» պոեմանման վեպի հիմքում, վեպ, որի կենտրոնական հերոսը՝ Մազուրի Զամոն, վեպի վերջնամասում՝ Կարսի անկումից հետո, խաչվում է համեմատվում է Զիսուս Քրիս-

տոսի հետ: Ծիշտ խաչված Զիսուս Նազովրեցու պես, որի պարանոցից տախտակ էին կախել՝ «Զիսուս Նազովրեցի» Զրեաստանի Թագավոր՝ մակագրությամբ, խաչված Մազուրի Զամոնի պարանոցից կախված տախտակի Մ. Զ. Ա. Ն. տառերն էլ նշանակում էին՝ «Մազուրի Զամոն՝ Արքա Նաիրի»:

Գաղափարական տարբեր դիրքորոշումներ ունեցող «անծանոթ» բարեկամների գրույցը, որն սկսվում է երկուստեք սիրալիք քաղաքավարությամբ, ի վերջո վերածվում է անխուսափելի քաղաքական սուր բանավեճի կամ գաղափարների կռվի, ուր կողմերը, մանավանդ Չարենցը, հռետորական երկայրի սուր խոսքի մեջ կիրառում են երգիծանքի տարբեր միջոցներ՝ նուրբ հումորից, մեղմ հեգնանքից սկսած՝ մինչև քաղաքական ամենասուր ու անխնայ սատիրա: Բայց կարելու է այն է, որ երկուսն էլ պահպանում են միմյանց հանդեպ փոխադարձ հարգանքն ու երբեմն էլ չեն զսպում պոռթկացող անթաքույց սերը:

Բոլոր տարածայնությունները բխում էին նրանց համոզմունքներ-

ից. խորհրդային երկրի առավելությունների գիտակցությամբ էր Չարենցը Խոսհակյանին հորդորում, որ վերադառնա Հայաստան: Այդ է խոստովանում Չարենցը «Ելեգիա՝ գրված Վենետիկում» պոեմում: Նույն համոզումով էլ նույն՝ 1925 թ. գրում էր.

*Ինչպես աշխարհի ճորտերին բոլոր,
Այնպես էլ գերի իմ հայրենիքին
Երկինք մի մաքուր, արեւ մի բոսոր՝
Լուկ հոկտեմբերյան հողմերը տվին:*

Հասկանալի է՝ Չարենցը հեգնանքով պիտի ընդուներ Նավասարդյանի՝ Հայաստանի եւ Երեւանի հանդեպ կարոտի արտահայտությունները եւ մանավանդ «մի երկու տարուց» հայրենիք վերադառնալու, ժողովրդին փրկելու համար բոլշևիկների՝ իշխանությունը կամավոր զիջելու մասին նրա ուղեմատյանի բացատրությունները: Ըստ բաներ Չարենցը պիտի հասկանար ավելի ուշ՝ իր փառաբանած «հոկտեմբերյան հողմերի» իրական հետեւանքները տեսնելուց հետո, որն իր հետ պետք է բերեր մեծ երազանքին հակադրվող խոր հիասթափություն եւ խորացներ «մի խումբ գաճաճների հայտնուցնության ներքո» միայնակ ու անօգնական հանճարի մարդկային տառապանքն ու ողբերգությունը.

*Վառ երգերս՝ հղած կարմիր
այգաբացին՝
Ողբ ու տրտունջ դարձան ու
փոխվեցին լացի,
Եվ այնքան բորբ՝ հանկարծ
անվերադարձ հանգավ
Անդրդվելի հավատս դեպի
գալիքն անգամ,
Եվ ինձ խոցող ներկան դարձան
անծիր...
Շարունակելի
Սամվել ՄՈՐԿՐԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր*

Սկիզբը՝ էջ 5

1927 թվականը եղավ Չորավարի կյանքի վերջին, ամենավերջին տարին: Դեռեւս Երիտասարդ տարիներից Անդրանիկը տառապում էր ուժեղ հոդաքվերից, իսկ 1920-ական թթ. դրան գումարվել էին սրտի անբավարար աշխատանքի հաճախակի դրսևերությունները: Չորավարը քաջ գիտակցում էր, թե օրեցօր, ամսեամիս ու տարեցտարի որքան է տկարանում առողջական վիճակը, թուլանում հոգեկան ու ֆիզիկական ուժերը: Սրտի ծանր տագնապները նրան օրեօրով զցում էին անկողին:

1927 թ. հուլիսի վերջին Չորավարը նորից սրտի ուժգին տագնապ ունեցավ, որի պատճառով 15 օր անցկացրեց հիվանդանոցում: Ամերիկյան բժիշկները խորհուրդ էին տվել հիվանդին բուժման տանել Կալիֆոռնիայի Սակրամենտո քաղաքի մերձակայքում գտնվող Զիբո հանքային ջրերի բուժավայր:

1927 թ. օգոստոսի 29-ին Չորավարը տիկնոջ՝ Նվարդի ուղեկցությամբ մեկնեց Զիբո հանքային ջրերի բուժավայր, որտեղ պետք է լոգանքներ ընդուներ: Դեռ նոր էին տեղավորվել բուժավայրի հյուրանոցում, երբ անսպասելի հյուր ունեցան: Չորավարին տեսակցության էր եկել հին օրերի ընկերը՝ Ամբաստան Բորոյանը (Մախլուտո): Հանդիպումը չափից ավելի ջերմ էր եւ հուզիչ: Զինակից ընկերներն այնքան շատ բան ունեին վերհիշելու եւ լիցքավորվելու հին օրերի բոցավառ հիշողություններով: Մախլուտոյի հետ այս հանդիպումը վերջինը եղավ Չորավարի համար: Հաջորդ օրը կտրուկ վատացավ նրա առողջական վիճակը:

ՄԱԿԱ ՉԵՄ ՆՈՔԱՐ, ԱՅԼ ԳՈՐԾՍ, ՈՐ ԿԻՍԱՅ ՄՆԱՃ...



Հանքային ջրում լոգանք ընդունելիս Չորավարը սրտի ծանր տագնապ ունեցավ: Բժիշկներն ու բուժող անձնակազմն իրար խառնվեցին, սակայն անկարող եղան որեւէ բան փոխել: Չորավարը հոգեվարքը տարավ փափուկ անկողնում: Նա բախտավորություն չունեցավ մեռնելու Արեւմտյան Հայաստանի բարձրիկ լեռներում, ինչպես իր գինակից ընկերներից շատերը: Իրենց փառքին մոտ լեզենդար հայրուկապետեր

Արաբոն, Աղբյուր Սերոբը, Գեւորգ Զառուշ գոհվեցին կռվի դաշտում՝ մահաբեր գնդակների տարափի ներքո: Անդրանիկը մեռավ ամերիկյան մայրցամաքում՝ Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստաններից հեռու, շատ հեռու: Սակայն բնավ ոչ հայությունից եւ հայկականից հեռու: Չորավարի մահվան լուրը հոգեկան ալեկոծումներ ու ցնցումներ առաջ բերեց ոչ միայն ամերիկահայության, այլև աշխարհասփյուռ հա-


յության բոլոր հատվածներում: Նրա մահվան լուրը կայծակահար թռավ գաղութից գաղութ, քաղաքից քաղաք՝ հայ եւ օտար պարբերականներով, պաշտոնական ու սովորական հեռագրերով, նամակներով, հեռաձայնով: Տարագիր հայությունը երբեք այսպիսի ցավ ու տագնապ չէր ապրել: Անդրանիկի մահը մեկ անգամ եւս վկայեց, որ նրա անունը դարձել է համազգային, համահայկական անմար եւ անփոխարինելի խորհրդանիշ: Այդ են վկայում նաեւ հարյուրավոր այն ցավակցական հեռագրերը, որոնք հղվում էին աշխարհի բոլոր ծայրերից՝ ուղղված Անդրանիկի այրուն՝ Նվարդին: Հեռագրեր էին ստացվում նաեւ օտարազգի քաղաքացիներից ու պաշտոնական անձանցից: Նշանավոր հայագետ Արշակ Զոպայանի հեռագիրը Փարիզից այդ ամենի խտացումը կարծես լիներ. «Ամբողջ ազգ մը ձեզ հետ կը ողբայ, իր մեկ հատիկ Անդրանիկը...»: Այո՛, Անդրանիկի պես անհատը ընդամենը մեկը կարող էր լինել յուրաքանչյուր ազգի համար:

Անվանի մտավորական, բանաստեղծ Վահան Թեքեյանը թերթերից մեկում արձանագրեց հետեւյալը. «Անդրանիկը մեռած չէ եւ երբեք չի մեռնելու: Նա մնալու է յաւերժ՝ իբրեւ կեանքի ներշնչող ու ոգեւորող ներկայություն»:

Շարունակությունը՝ էջ 8

Արագած լեռան փեշարին սփռված հայկական վաղմիջնադարյան եկեղեցիներում որմնակարների ուսումնասիրության, դրանց մնացորդների հայտնաբերման ու հնարավորի սահմաններում վերջինների մաքրման, պահպանման ու վերականգնման ծրագրի շրջանակներում՝ վերականգնող ճարտարապետ, իտալացի Արա Չարյանն ու որմնակարի վերականգնող մասնագետ, իտալացի, ազգությամբ բելգուհի Քրիստին Լամուդեն անցյալ տարի Արագածոտնի մարզի Մաստարա գյուղի Ս. Զովհաննես Մկրտիչ եկեղեցում ուսումնասիրություններ կատարելու ընթացքում տեղ-տեղ պահպանված ավազակրային սվաղի շերտի տակ հայտնաբերեցին որմնակարի մնացորդներ (նկ. 1): Նկարչական հորինվածքի գունային մնացորդներն ուսումնասիրելու ու դրանք պահպանելու, վերականգնելու միտումով՝ 2016 թվականին հարցում արվեց ՀՀ մշակույթի նախարարությունն ու Արագածոտն թեմի առաջնորդարան: Համապատասխան համաձայնություն ու թույլատվություն ստանալուց հետո՝ այս տարվա ամռանը, վերականգնող մասնագետները՝ իրենց հաշվին, եկեղեցու ներսում կազմակերպեցին շին. հրապարակ՝ Իտալիայից բերված տախտակամածով, գործիքներով ու անհրաժեշտ նյութերով: Որմնակարի պահպանված հետքերը գտնվում են եկեղեցու արևմտյան մուտքի վրա՝ 1930-ական թվականներին փայտյա օթյակի հրվարմ. անկյան պատին՝ հատակից մոտ 3,5 մ բարձրության վրա (նկ. 2): Տարեց մաստարացիների վկայությամբ՝ օթյակն Ի դարի սկզբներին հավանաբար կառուցել են գյուղերից ֆրանկները՝ երգչախմբի համար: Այն հյս. եւ հրվ. պատերին հաված փայտե աստիճաններ ունի՝ վեր բարձրանալու հա-

ՄԱՍՏԱՐԱՅԻ Ա. ԻՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐԱՆԿԱՆԳՆԵՐԸ



մար: Փայտե օթյակը կառուցելու ժամանակ եկեղեցու ներսն ամբողջովին սվաղված է եղել, ուստի՝ որմնակարի հետքերը քողարկված էին: Այդ իսկ պատճառով՝ օթյակի կառուցման համար անհրաժեշտ փայտե գերաններն ու հատակը, դժբախտաբար, կառուցվել են որմնակարի պատը մասնակի փչացնելով ու ծածկելով նկարագրող մեծ հատվածը: Եկեղեցու որմնակարված ու առանց որմնակարի սվաղված բուրդ պատերը սոր գործիքով ծակոտվել են այնպես, որ նոր՝ ավազակրային սվաղն ավելի ամուր հավի պատին: Մաստարացիների վկայությամբ՝ 1992 թվականին՝ խորհրդային միության փլուզումից հետո, եկեղեցին դատարկել են նախկին պահեստի ապրանքներից ու, պատերը մաքրելու նպատակով, զանազան սուր գործիքներով՝ կացին, ուրագ, քլունգ, բրիչ, հեռացրել են սվաղը՝ կրկին

փչացնելով ու վերացնելով արդեն վատ պահպանված որմնակարների հետքերն ու հին սվաղը: Այսօրվա դրությամբ գրեթե ամենուր պահպանվել է վերջին միսրագույն սվաղի բարակ շերտը, որը ջողարկում է եկեղեցու հին՝ բնօրինակ սվաղը: Սվաղը քանդել են այնպիսի վայրագությամբ, որ հին պատի տարբեր հատվածներում տուֆե քարերը ծակծկել ու փչացրել են: Կենտրոնական գմբեթն ու թմբուկը, որոնք 20 մ բարձրության վրա են, պահպանում են դեռևս վերջին սվաղի ու ներկի ընդարձակ հատվածներ: Գմբեթը շուտափույթ վերանորոգման կարիք ունի, քանզի ներս թափանցող անձրևաջրերը պոկում են գմբեթի սվաղի հատվածները, որոնք կամաց-կամաց ցած են ընկնում եկեղեցու հատակին՝ վերացնելով պատմական հատվածի վկայությունները: Մեզ հետաքրքրող որմնակարի հատվածի մաքրման աշխատանքներն սկսվեցին 2017 թվականի հուլիսի 5-ին՝ Ժճ դարի սկզբի սվաղի՝ նայլոնի խոզանակով ու նշտարով հեռացման աշխատանքներով: Հասնելով որմնակարի պահպանված հատվածին՝ այն մաքրվել է դեմիներալիզացիայի ջրի ու թեթեւ բազիկ լուծույթի թրջոցներով, որմնակարի թաղանթը պաշտպանվել համապատասխան լուծույթի քսուրով: Աշխատանքների ընթացքում պարզվեց, որ որմնակարն իրականացվել է կրկնակի սվաղի ծեփի վրա: 4-5 մմ հաստությամբ սվաղի առաջին շերտի վրա անցկացված երկրորդը, որն ավելի բարակ է ու նուրբ, արվել է որմնակարի բնական պիգմենտները ու հավանաբար օրգանական կապակցվող տարրը կլանելու համար: Նմուշի մասնիկը հանձնվել է Վիեննայի «Պալլադիո» մասնագիտական կենտրոն՝ լաբորատոր հետազոտման համար:

Մաքրելուց ու ամրակայելուց հետո որմնակարի պահպանված հատվածն այնքան վնասված էր, որ եկեղեցու հատակից նայելով՝ անընթեռնելի էր, ուստի որոշում կայացվեց լցակայել պակասող սվաղի հատվածները եւ ըստ պահպանված հատվածների՝ ամբողջացնել նկարչական հորինվածքն այնպես, որ որմնակարի պահպանված մասերն ստանան արժանահավատ ու ընթեռնելի պատկերագրություն: Որմնակարի բնական սվաղի ոչնչացված հատվածները եւ բարբարոսների խազագրերով փչացրած մասերը լցակայվեցին նույն հարթությամբ իրականացված եւ հին որակին ու գույնին համապատասխան ավազակրային նոր սվաղով՝ լավ հարթեցնելով ու հղկելով այն փոքր ծեփիչով:

Նկարչական հորինվածքն իրականացվել է բնական պիգմենտների միջոցով, որոնք անցկացվել են բարակ շղարչների տեսքով՝ այնպես, որ լրացվի նկարչական մանրամասնի հորինվածքը, բայց նաեւ նոր մասը հնից տարբերվի ու ընթեռնելի մնա: Սեւ, զուգահեռ գծերի մեջ ամփոփված կարմիր ու սպիտակ շեղանկյունների երկրաչափական հորինվածքով շրջանակն ամբողջացվել ու վերականգնվել է այն հատվածներում, ուր այն այլևս չէր պահպանվել: Պահպանական, վերականգնման ու ամբողջացման աշխատանքների ավարտին որմնակարի ամբողջ մակերեսը պատվեց Palaroid B72 համապատասխան լուծույթի պաշտպանիչ շերտով:

Վերոհիշյալ միջամտությունները հնարավոր դարձրին բացահայտել որմնակարում պատկերագրված կերպարը՝ թուրք պատյանի մեջ ամփոփված հեծյալ անձը, որ ամենայն հավանականությամբ ս. Գեորգ գորավարն է:

Շարունակությունը՝ էջ 8

Սկզբը՝ էջ 5

Եթե մենք էլ վարվենք Ռասսելի նման եւ նույն ոգով ներկայացնենք հին Իսրայելի պատմությունը, ապա կարող ենք բերել երախյական Հին Կտակարանից բազմաթիվ նման պոնտիֆիկալ փաստեր: Իբրեւ օրինակ բերում են Սելեւկյան թագավոր Աստիոգոս IV-ի հրամանով Երուսաղեմի տաճարը հրեաների ձեռքով պղծելու հետեյալ դրվագը. «Յետ ոչ բազում ժամանակաց առաքեաց թագաւորն զվթենեբոս ծերունի, ստիպել տազնապել զՀրեայնս՝ անցանել զհարցն օրինօք եւ յօրէնսն Աստուծոյ այլ մի՝ եւս յամենալ. եւ պղծել գտաճարն Երուսաղեմի, եւ անուանել զկա յայնմիտն յանուն որմզդական դիցն ողոմպիացոց. եւ որ ի Գարգարիզին էին, որպէս որ զտեղին բնակեալ նստէին, հիրաւսէր որմզդական դիցն վանատրի: Եւ չարաչար դժուարին նեղութիւն չարեաց ի վերայ հասուցանէին. գտաճարն սուրբ՝ պղծութեամբք արուեստականօք հեթանոսաց լոյր, եւ սրբութեան սրահն արամբք եւ կանամբք միմեանց խառնակութեամբք յաղտեղութիւն դարձուցանէին, եւ որ ինչ ոչ եւս արժան ինչ էր՝ զայն ի ներքս համարձակ տանէին, եւ զսեղանն ինքնին ի գլխովին անարգելովք յօրինացն եւ խոտելովք լուսին: Եւ անդ էր ոչ զօրէնս շաբաթօց տեսանել, եւ ոչ զտօնս տարեկանաց զհայրենիս պահել, եւ ոչ ընաւ ամենեւին հրեայ անուն անուանել իշխել: Վարէին անձին ստեպ ստեպ տագնապաւ յամսաւոր յօր տօնի ծննդեան թագաւորին՝ զի զոհեցնել: Իբրեւ տօն հասաներ սպանդարամետական պաշտամանն, տազնապէին զնոսա՝ պասկեալս թաւ ոստօք Սպանդարամետին կաքաւել» (Գիրք Աստուածաշունչ Յին եւ Նոր Կտակարանաց. Ի Վենետիկ, 1860-ՌՅԹ, Բ. Սակարայեցոց, գլուխ 2, 1-7, էջ 536) եւ այլն: Հայերեն թարգմանությունը ճշտվի համապատասխանում է Մարտին Լյութերի գերմաներեն թարգմանությանը. «Nicht lange darnach sandte der König einen alten Mann von

ՋԵՅՄՍ ՌԱՍՏԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Athen, daß er die Juden zwingen sollte, daß sie von ihrer Väter Gesetz abzielen, und Gottes Gesetz nicht mehr hielten. Und das er den Tempel zu Jerusalem sollte verunreinigen, und ihn heißen des Jupiter Olympius Tempel, und den zu Garizim des Jupiter Xenius Tempel, dieweil fremde Leute daselbst wohnten. Aber solch wüstes Wesen tat jedermann sehr wehe. Denn die Heiden schwelgeten und prasseten im Tempel, und trieben allerlei Unzucht mit den Weibern an der heiligen Stätte, und trugen viel hinein, das sich nicht gebührte. Man opferte auf dem Altar verbotene Opfer im Gesetz, und hielt weder Sabbathe noch andere gewöhnliche Feiertage; und durfte sich gar niemand merken lassen, daß er ein Jude wäre; Sondern man trieb sie mit Gewalt alle Monate zum Opfer, wenn des Königs Geburtstag war. Wenn man aber des Bacchus Fest beginde, da zwang man die Juden, daß sie in Kränzen von Epheu dem Bacchus zu Ehren einhergehen mußten! (Die Bibel. Nach der deutschen Übersetzung D. Martin Luthers. 1904. Berlin, Eisenach, Leipzig. Hermann Hillger Verlag. 2. Makkabäer, Cap. 6, 1-7, S. 98):

Այստեղ «տօն սպանդարամետական» թարգմանված է հունարեն Դիոնիսիայն տոն բառերից եւ համապատասխանում է Լյութերի գերմաներեն «Bacchus Fest» (Բաքոսի տոն) խոսքին, իսկ «Սպանդարամետին կաքաւել» - հունարեն Դիոնիսոսի շքերթ, գերմաներեն՝ Բաքոսի պատվին:

Այժմ հարց է ծագում. եթե նախաքրիստոնեական շրջանում հայերն իսկապէս համատարած կրակապաշտ էին եւ ապրում էին ինքեստի օրենքներով, ինչպէս Սասանյանները Կարտիր մոզպետի վարդապետությանը, ապա ի՞նչն էր խանգարում հայ ժո-



ղովորին, 451 թվի Ավարայրի պատերազմի ահեղ սպանալիքից խույս տալու եւ իր գոյությունը փորձության չենթարկելու փոխարեն, պարզապէս վերադառնալ ոչ վաղ անցյալի իրենց համար սովորական կրակապաշտությանը եւ կենցաղավարության եւ թաղայալ նախկին պիղծ օրենքներին:

Ս. թ. V դարի կեսերին Հայոց մեծամեծներին հղած իր սպանալիքի հրովարտական, պահանջելով ընդունել կրակապաշտություն, արքայից արքա Հակոբեղ II-ն արգելում էր սրբազան կրակի մեջ այրել ուրեւ կենդանի շունչ կամ ժժմունք. «... ծիւք եւ քակորք ի կրակ մի՛ եկեցսն... Օձք եւ մողեսք, գորտք եւ մրջմունք, եւ որ այլ եւս խառնափնդոր բազմաճճիք են, մի՛ կայցեն, այլ վաղ թուով համարով ի մեջ բերցեն ըստ արքունի չափոյն» (Եղիշէ, էջ 52-

53): Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ 1960-ական թվերին Էջմիածնի վանքի վերանորոգման ժամանակ թեմի տակ հայտնաբերված կրակարանը Ռասսելը նույնացնում է մ. թ. ա. VII դարում Բակտրիայում գոյություն ունեցած զոհաբերման կրակարանի հետ՝ մոռացության տալով, որ թուրանցիները՝ այսօրվա թուրք-օղուզների նախնիները, մի գիշեր հարձակվելով Բակտրիայի վրա, այդ սրբազան կրակարանի մեջ ողջ-ողջ այրեցին զրադաշտական ուսմունքի ամենամեծ քարոզչին՝ գրադաշտ մոզ-թագավորին: Եվ քանի որ թուրանցի բարբարոսները մնացին անպատիժ, ապա պետք է պատկերացնել, թե դրանից հետո ինչպէս սասանվեց սրբազան կրակի հավատը:

Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ արդեն իսկ ցույց է տրված, թե որքան համատարած են Հին Կտակարանում կրակարանները, մատուցվող զոհաբերությունների ճենճերն ու խանձահողը, ինչպէս եւ դրանց համար գործածվող տեսակ-տեսակ գործիքներն ու հարմարանքները, որի համար հին եբրայեցի մարգարեները Աստծո անունով դատապարտում էին այդ համատարած լափիլիզող ճարակը՝ «Յագեալ եմ արդ զոհիւք ծերովք»: Եւ թե՛ «Ոչ վասն պատարագաց քոց կշտամբեմ զքեզ». այլ՝ «Մատո՛ Աստուծոյ պատարագ օրհնութեան» («Հագեցած եմ քո զոհերից ... Մատուցի՛ր Աստծուն օրհնության պատարագ», հմմտ. Սաղմոս, ԽԹ, 8-14). Եւ թե՛ «Հի՛նչ ինտրե ի քէն Տէր, ո՛վ մարդ, բայց առնել իրաւունս եւ արդարութիւն, եւ պատրաստ լինել երթալոյ զկնի Տեառն» (Ազարթ., պրք. 696):

Շարունակելի
Կլեբոս ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՄԱՆԱ ՉԵՄ ՀՈԳՎԱՐ, ՎՅԼ ԳՈՐԾԱ, ՈՐ ԿԻՍԱՍ ՄԵՎՅՈՒՆ...

Սկիզբը՝ էջ 6

Անտարակույս էր, որ մահը լուրջ ֆիզիկապես է ընդհատել Անդրանիկի ներկայությունը, սակայն հոգեւոր ու բարոյական չափումներով նա շարունակելու էր լինել հայության մեջ և հայության կողքին: Կահիրեում լույս տեսնող «Հուսաբեր» թերթում անվանի գրականագետ, հանրային գործիչ Նիկոլ Աղբալյանը գրում էր, որ Անդրանիկն անհիշխանական խառնվածք ուներ և ըմբոստ էր ամեն իշխանության դեմ՝ լինել հայրենի թե օտար, քանզի նա հնազանդվում էր ոչ թե իրավունքին, այլ բարոյական հեղինակության:

Հայ գործարարի հիշատակին բազմաթիվ հոդվածներ են այլեւայլ նյութեր լույս տեսան նաեւ օտարերկրյա՝ բուլղարական, հունական, ֆրանսիական, բրիտանական երկրների պարբերականներում: Չորավարի մահվան արձագանքեց նաեւ թուրքական մամուլը՝ իհարկե չարակամորեն ու չարախիղճ կերպով: Թուրքական «Սոն Սաաթ» թերթն այդ առիթով հետեւյալ կերպ էր արձագանքում. «Այս հողերի վրա այլեւս ոչ մի Անդրանիկ չպիտի ծնվի, եթե ծնվի էլ, չպիտի մեծանա, եթե մեծանա, չպիտի լեռ բարձրանա, եթե լեռ էլ բարձրանա, չպիտի կարողանա սուրը քաշել, եթե քաշի, իր կուրծքը մխելով՝ անձնասպան լինելու համար միայն պիտի քաշի»:

Որքան հեռատես ու ճշմարիտ էր Չորավար Անդրանիկը, էր մահվանից ժամեր առաջ, դիմելով տիկնոջը, բացականչել էր. «Նուա՛րդ, մահուանս համար չեմ ցավիր, կը ցավիմ, թե որքան ուրախ պիտի ըլլան թուրքերը: Այս, եթե անգամ մըն ալ պատեհութիւն ունենայի... Մահս չեմ հոգար, այլ գործս, որ կիսատ մնաց...»:

Անդրանիկը կնոջը նաեւ հետեւյալն էր պատգամել. «Մարմինս օտար հողի վրա չթողու... Անպայման Հայաստան փոխադրեք: Եթե զիս հայրենիք չընդունին, գոնե ձեռքիս ցուցամատը կտրել կուտաս և հոն կորկես, տեղ մը թող թաղես: Այս մասն շատ աշխատած է հայրենիքի համար և շատ հոգնած է: Թող հայրենի հողին մեջ հանգստանայ: Իսկ եթե ատ ալ մերժուի և կարելի չըլլայ փափագ իրագործել, մարմինս Պուկլարիա՝ Վանա տարեք և թաղեցեք քոջս՝ Նագելիի գերեզմանին քով»:

Խորհրդային Միությունում իշխանության դեկին գտնվող ստալինյան վարչակարգը որեւէ կերպ չարձագանքեց հայ մեծանուն գործարարի մահվան լուրին և քննադատաբար չէր արտահայտվում նրա հուղարկվողությունը և խորհրդային Հայաստանում:



Անդրանիկի մյուս փափագը՝ թաղվել Մշո Առաքելոց վանքում, եւս չէր կարող իրականություն դառնալ, քանի որ Արեւմտյան Հայաստանն այլեւս գերի էր թուրքական բիրտ լծին: Չորավարի հուղարկվողությունը կայացավ 1927 թ. հոկտեմբերի 7-ին Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատանը: Սփյուռքահայությունը բոլոր կարելիությունները գործի էր դրել, որպեսզի ազգային մեծ հերոսի թաղումը տեղի ունենա պատվի և արժանապատվության բոլոր չափանիշներով: Սգո թափորին մասնակից էր շուրջ 15.000 հայ և օտարազգի մարդ: Թափորի հետեւից

չարժվում էր շուրջ 1500 ավտոմեքենա: Նրա նախկին զինվորները պատվով պահակ էին կանգնել ամբողջ արարողության ընթացքում: Չինվորական նվազախումբը հնչեցնում էր Շոպենի մահերգի մեղեդիները: Չորավարի մահվան կապակցությամբ բազմամարդ սգահանդեսներ կատարվեցին քայահոծ քաղաքներում՝ Նյու Յորքում, Լիոնում, Չիկագոյում, Բուխարեստում, Փարիզում, Լոս Անջելեսում, Կահիրեում, Կալկաթայում, Բոստոնում, Մարսելում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆիլիպինում և այլուր:

Չորս ամիս անց Անդրանիկի այրին Սան Ֆրանցիսկոյի ֆրանսիական հյուպատոսի միջոցով դիմեց Ֆրանսիայի կառավարությանը՝ Չորավարի մարմինն այդ երկիր փոխադրելու և Փարիզում թաղելու վերաբերյալ: Ընդամենը չորս օր անց Վաշինգտոնի ֆրանսիական դեսպանությունը պատասխանեց, որ իր երկրի կառավարությունը սիրով արտոնել է հայ գործարարի մարմինը փոխադրել Փարիզ և հուղարկվողը Պեր Լաշեզ գերեզմանատանը:

1928 թ. հունվարին Փարիզում տեղի ունեցավ Չորավարի մարմնի՝ համազգային չափանիշներով երկրորդ մեծ հուղարկվողությունը: Չորավարի հրաժեշտի արարողությանը ներկա էր ողջ ֆրանսահայությունը, նաեւ բազմաթիվ մարդիկ եվրոպական այլ երկրներից: Պաշտոնական արարողությանը ներկա էին Ֆրանսիայի պաշտպանության և արտաքին գործերի նախարարությունների, Փարիզի քաղաքապետարանի պատվիրակությունները և հասարակական բազմաթիվ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պեր Լաշեզ գերեզմանատանը հնչեցին բազմաթիվ ելույթներ հայրենի և ֆրանսերեն լեզուներով, խոսք ասացին հայ հասարակական ու քաղաքական մտքի երեւելի ներկայացուցիչները:

Իր մահից յոթանասուներեք տարի անց միայն Չորավար Անդրանիկը վերադարձավ հայրենիք՝ իր վերջնական հանգրվանը գտնելով հերոս նահատակների բարձունքում՝ Եռաբլուր պանթեոնում:

Արմեն ԿՐՍՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ էջ 7

Շատ վատ երեւացող ու վայրագորեն վնասված որմնակարի հերոսի դեմքն ամբողջովին վնասված է, ձիու ոտքերը խազված ու վնասված են, ձիավորի մարմինը՝ դարձել անճանաչելի: Որմնակարները վնասվել ու ավերվել են երկու անգամ: Առաջինը՝ սվաղով ծածկելու ժամանակ, երկրորդը՝ այն հեռացնելիս: Օթյակի հորիզոնական հենարանի գերանն ընկած է որմնակարի ձիավոր հերոսի ձիու վզի վրա, իսկ օթյակ տանող աստիճանը, որ բարեբախտաբար միայն հենված է որմնակարին, ծածկում է ձիու հետեւի ոտքը: ՀՀ մշակույթի նախարարությանն առաջարկել ենք աստիճանի այս հատվածը ձեռափոխել այնպես, որ որմնակարն ամբողջությամբ ընկալվի ու տեսանելի լինի: Նկարիչը վարպետորեն և մանրամասն նկարագարող է ձիավորի հագուստի ելեւէջները, ձիու եզրագիծն իրականացրել կարմիր ներկով, թուրք, թախտիկ ու պատյանը՝ բավականին մանրամասն: Այս ամենը խիստ արտահայտիչ է ու պատկերազարկան: Հետաքրքրական են ձիավորի թիկնոցի հատվածը, լայն տաբատի ծալքավորումներն ու գոտու նուրբ լուծումները:

ՄԱՍՏԱՐԱՅԻ Ա. ԻՆՎՈՒՍՏՆԱ ԱՎՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐԱԳԱՆԿԱՐԳԵՐԸ



Այս երկու սրբապատկերների միայն եզրագծերն են պահպանվել՝ բացառությամբ ս. Գաբրիելի հրեշտակապետի գլխի գանգուր մազափնջի հատվածը: Վերջինիս պատկերագրությունը Մաստարայի եկեղեցում պատահական չէ, քանզի Ղուկասի Ավետարանի համաձայն՝ Մկրտիչը որդին էր Եղիսաբեթի ու քահանա Չաքարիայի, որոնք պատկառելի հասակում նրան ունեցան: Հովհաննեսի ծնվելու լուրը Չաքարիան ստանում է Աստուծոց՝ Գաբրիել հրեշտակապետի միջոցով Տաճարում ծիսական խնկարկության ժամանակ: Այս հատվածի որմնապատկերները ոչնչացվել են՝ առանց խնայելու նրանց գեղեցկությունն ու վեմնությունը: Նկարչական հատվածի ամբողջ մակերեսը ծածկված է խազերով ու փոսիկներով: Այս որմնակարը նույնպես առաջին որմնակարի հորինվածքի նման ունեցել է շրջանակ:

Եկեղեցու այս հատվածի որմնակարների վնասված հետքերի վրա աշխատելու ընթացքում մտածեցինք, որ եկեղեցին չէր կարող ունենալ միայն որմնակարված այս պատերի հատվածները, ու սկսեցինք փնտրել այլ հետքեր՝ ներքին պատերի գանգան հատվածներում: Շուտով մեր ենթադրությունները տվեցին ցանկալի արդյունք՝ եկեղեցու տարբեր պատերին հայտնաբերվեցին որմնակարի մնացորդներ: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ ի սկզբանե եկեղեցին ամբողջությամբ որմնակարված է եղել: Որմնակարի այլ հետքեր կան գլխավոր խորանում, հրվ-արլ. որմնապատակ անկյան պատին, հարավային խորանի արլ. պատին: Այս վերջինը մեծ հայտնագործություն էր, քանզի գետնից լինելով հատակից մոտ 3 մ բարձր ու եկեղեցու հատակից բոլորովին անտեսանելի է սվաղի տակ՝ այն ներկայացնում է երկու ֆիգուրների լուրջ ներքեւի հատվածները՝ միևնույն գոտակտեղը: Հետաքրքրականն այն է, որ այս երկու պատկերները նույնպես շրջանակված են՝ առաջին որմնակարի հորինվածքին համապատասխան, ուր սեւ, գուգահեռ

գծերի մեջ ամփոփված են կարմիր ու սպիտակ շեղանկյունների շարքերը: Այս հանգամանքը վկայում է նույն նկարչի ձեռքի և նույն ժամանակահատվածում կատարվածի մասին: Ֆիգուրներից ձախն աշխարհիկ է, ոտքին՝ սանդալ, ոտքի եզրագիծը կարմիր է, հագին՝ սպիտակ, երկար զգեստ, իսկ աջը՝ բարձրաստիճան հոգեւորական է՝ վստահաբար ավելի կարեւոր անձ, քանզի հագուստն ավելի պաշտոնական է: Այս պատկերագրությունները նույնպես շատ վնասվել են հարվածներից ու խազերից: Սրբապատկերների ներքեւի հատվածում հայտնառն արձանագրություն է պահպանվել, որի բովանդակությունը մեզ հայտնի չէ: Եկեղեցու այս հատվածի որմնակարի վրա, նախորդի նման, իրականացվել են մաքրման, ամրակայման ու պահպանական վերականգնման միջոցառումներ այնպես, որ շատ վատ պահպանված ու բազմիցս վնասված որմնակարի հատվածն ընթացիկ դառնա եկեղեցու հատակից: Բազմաթիվ մանրամասներ ուսումնասիրվել ու վերականգնվել են՝ տարբերակվելով դրանք հին, անընթացելի փոքր հատվածներից:

Որմնակարի հետքեր հայտնաբերվեցին նաեւ հրվ-արլ. անկյան պատին, որից հասկանալի է միայն մի սրբապատկերի լուսապատկի աղոտ հետագիծը: Այս հատվածում իրականացվել են միայն մաքրման ու ամրակայման աշխատանքներ:

Հակված ենք եզրակացնելու, որ հայ ճարտարապետության գլուխգործոց Մաստարայի Ա. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին տվյալ ժամանակաշրջանի հայկական եկեղեցիների շարքում մտահաղացվել, նախագծվել, կառուցվել է՝ նկատի

առնելով նրա լուսավորության խորհրդավորությունն ու որմնակարների հիասքանչ պատկերազրույցները՝ որպես արվեստի կատարյալ պատկերի ամբողջական ու նախնական մտահղացմամբ կերտված գանձ, որն ավելի և արժեքավորում հայ վաղբրիստոնեական գեղարվեստական աշխարհըմբռնումը ու տիեզերական մտահղացումը: Զրիստոնյա հայ մարդը ձգտել է դեպի գմբեթ, դեպի կատարյալ պատկերազրույց ու հավերժություն: Սրա վկաներն են նույն ժամանակաշրջանում կառուցված և մեր կողմից վերականգնված Լմբատավանքի Ս. Ստեփանոս Նախավկա, Կարմրավորի Ս. Աստվածածին, Արթիկի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցիների որմնակարները:

Արա ՉԱՐՅԱՆ
Զրիստոնյա ԼԱՍՏՈՐԵ
Իտալիա, 2017

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 8.01.2018թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ